## ՏԵՂԵԿԱՆՔ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 12-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 156.1-րդ հոդվածի 1-ին մասում~~ը շարադրել նոր խմբագրությամբ~~.

1. «սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերով.

~~«1. Գերեզմանն օգտագործողի կողմից գերեզմանի կառուցապատման, բարեկարգման և շահագործման օրենսդրությամբ սահմանված կանոնները, այդ թվում՝ քաղաքաշինական նորմերը խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:~~

**Հոդված 2.** Օրենսգրքի 156.1-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-ին կետով.

«1.1 Գերեզման շահագործողի կողմից գերեզմանի կառուցապատման, բարեկարգման և շահագործման օրենսդրությամբ սահմանված կանոնները, այդ թվում՝ քաղաքաշինական նորմերը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:»:

**Հոդված 3 ~~2~~.** Օրենսգրքի 156.1-րդ հոդվածի ~~Օրենքի~~ 3-րդ մասից~~ում~~ հանել «անվճար կամ վճարովի հիմունքներով~~կամ նրանց լիազորած անձանց կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպության~~» ~~և «ինչպես նաև ընտանեկան գերեզմանի»~~ բառերը:

~~**Հոդված 3.** Լարցնել նոր 13-րդ մաս. «13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված ժամկետներում իրենց տարածքներում գտնվող գերեզմանատները Հայաստանի Հանրապետության կադաստրային կոմիտեում չգրանցելը, ինչպես նաև էլեկտրոնային միասնական շտեմարանում օրենսդրությամբ սահմանված ժամկետներում անհրաժեշտ տվյալների չտրամադրելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:~~

~~**Հոդված 4.** Լրացնել նոր 14-րդ մաս. «14. Սույն հոդվածով բոլոր մասերով նախատեսված նույն արարքները, եթե կատարվել են կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ, վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:»:~~

**Հոդված 4~~5~~.** Օրենսգրքի 219.1-րդ հոդվածի 3-րդ մասից~~ում~~ հանել «հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մասնավոր գերեզմանատների մասով, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերով,»~~156.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մասնավոր գերեզմանատների մասով,»~~ բառերը:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ին: